Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐԵՎԻԿ ԽՆԿՈՅԱՆԻ՝ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արևիկ Խնկոյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Լեհաստանի Հանրապետություն, ք. Վարշավա, հունվարի 30-31, 2025 թվական

4. Հրավիրող կողմը

Լեհաստանի գիտությունների ակադեմիայի հիմնարար տեխնոլոգիական հետազոտությունների ինստիտուտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ԵՄ նորարարության և տեխնոլոգիաների ոլորտում «Առավել առաջատար ենթակառուցվածքներ» նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) Եվրոպական խորհրդատվական խորհրդի առաջին հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

1. Նախագիծը, որն ուղղված է գիտահետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացմանն աջակցությանը, Նախագծի բովանդակությունը, նպատակներն ու խնդիրները:

2. Նախագիծն իրականացնող կազմակերպությունները, դրանց գործունեությունը և դերերը նախագծում:

3. Նախագծի աշխատանքային փաթեթները և առաջադրանքները:

4. Նախագծի կողմից ստեղծվող հարթակը, ծառայությունները և դրանցից օգտվելու հնարավորություններն ու պայմանները:

5. Նախագծի հիմնական ազդեցությունը, որը լինելու է գիտական գործունեության արդյունքների և ստացված տեխնոլոգիաների պատրաստիության մակարդակների գնահատումը, ինչպես նաև գիտահետազոտական նախագծերի արդյունքների տարածման և կիրառման միջոցով զարգացող երկրներում ինովացիոն գործընթացներին աջակցությունը:

6. Այլ ընթացիկ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառման շրջանակներում հանդիպում է եղել Նախագիծը համակարգողի և իրականացնող կողմերի հետ, ովքեր մանրամասն ներկայացրեցին իրենց միջոցառումները և անելիքները:

Որպես նախագծի խորհրդատվական խորհրդի անդամ՝ մասնակցել եմ խորհրդի պանելային քննարկմանը, որի ժամանակ Նախագծի և դրա յուրաքանչյուր աշխատանքային փաթեթի վերաբերյալ ներկայացրել եմ դիտարկումներ և առաջարկություններ, մասնավորապես Նախագծի կողմից ապահովվող հարթակում Հայաստանի գիտական համայնքի մասնակցությունը և ներգրավվածությունը ընդլայնելու վերաբերյալ:

Ներկայացրել եմ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից կիրառական նշանակության հետազոտությունների և փորձարարական մշակումների աջակցությանն ուղղված միջոցառումները:

Քննարկվել են նաև մի շարք օրակարգային և աշխատանքային հարցեր:

Հանդիպում եմ ունեցել Լեհաստանի հետազոտությունների և մշակումների ազգային կենտրոնի ներկայացուցչի հետ և քննարկել կենտրոնի կողմից իրականացվող ինովացիոն նախագծերի աջակցության մեխանիզմի շրջանակներում համագործակցության հնարավորությունները: Քննարկվել են կիրառական նշանակության հետազոտական նախագծերի աջակցության համատեղ մրցույթի կազմակերպման հնարավորությունները, ժամկետները, գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառները, ֆինանսական ծավալները:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,

Նախագծի խորհրդատվական խորհուրդը կաջակցի Նախագծի գործունեությանը՝ տրամադրելով առաջարկություններ և փորձագիտական եզրակացություններ ընթացիկ

գործողությունների, դրանց ազդեցությունների և հիմնական կիրառելի արդյունքների գնահատման վերաբերյալ, ինչպես նաև կնպաստի առաջացող խնդիրների լուծմանը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախագծի կողմից ապահովվող գիտական գերծունեության արդյունքների առևտրայնացմանն աջակցող հարթակում ընդլայնել Հայաստանի գիտական կազմակերպությունների մասնակցության հնարավորությունները:

Լեհաստանի հետազոտությունների և մշակումների ազգային կենտրոնի ներկայացուցիչն առաջարկեց իրենց պատվիրակության այցը Հայաստան, որի ժամանակ առավել մանրամասն կքննարկվեն ինովացիոն ներուժ ունեցող գիտահետազոտական երկկողմ նախագծերի աջակցության մրցույթի հայտարարումը և դրա վերաբերյալ համապատասխան հուշագրի ստորագրումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արևիկ Խնկոյան

05.02.2025